ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿՏՊՔ-Ի ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՈՒՀԻ Ս. ՀՈՒՍԻԿՅԱՆԻ ՀԵՏ

Ողջույն տիկին Հուսիկյան, գրադարանը, որպես ֆորմալ և ոչ ֆորմալ հոգևոր-մշակութային հարստության կրող, առանցքային դերակատարում ունի հասարակության համար. գրադարանի գործունեությունը պարզապես գործունեություն չէ, այլ խրթին և պատասխանատու առաքելություն:

Մի քանի հարց գրադարանի և Ձեր գործունեության վերաբերյալ:

Սկսենք մասնագիտության ընտրությունից և կարևորությունից:

Ի՞նչն է ոգեշնչել Ձեզ ընտրել այս կարևոր և պատասխանատու մասնագիտությունը:

-Անկեղծ ասած չէի կողմնորոշվում <<Մանկավարժության>> և <<Գրադարանավարություն և մատենագիտություն>> մասնագիտությունների միջև, բայց արդյունքում հաղթեց ընթերցանության հանդեպ մեծ սերը և ճակատագիրը ինձ ուղղորդեց դեպի ներկայիս սիրելի մասնագիտությունը:

Ինչպիսի՞ վարվելակերպ պետք է ունենա գրադարանավարը, երբ շփվում է այցելուի հետ:

-Առաջին հերթին պետք է հասկանալ այցելուի նախասիրությունը և ըստ այդմ ուղղորդել նրան կատարելու ճիշտ, իրեն համապատասխան ընտրություն: Վարվելակերպի հետ կապված կարևոր պայման է լինել բարեհամբույր, ժպիտով, հասկանալ այցելուի հույզերը, երևի թե այդքանը:

Կարո՞ղ եք մտաբերել որևէ նշանավոր նախագիծ, որը Ձեր աշխատանքում ֆավորիտ նախագծերից է:

-Սիրելի նախագծերից նշեմ, որ մենք արդեն 2 տարի շարունակ կազմակերպում ենք ավանդույթ դարձած <<Նվիրիր գիրք>> նախագիծը, որի շրջանակում գրադարանին են նվիրվում բազմաթիվ գրքեր սիրելի ուսանողների, աշխատակազմի, բարերարների կողմից: Նաև այս տեսանկյունից դասախոսները, ուսանողները տարվա ընթացքում մշտապես տրամադրում են իրենց գրքերը, որոնք ընթերցվում են այցելուների կողմից:

Չենք կարող շրջանցել մեր իրականությունը, Ձեր ոլորտը ևս անմասն չի մնացել տեխնոլոգիական առաջընթացից, այս տեսանկյունից մի քանի հարց՝

ինչպե՞ս են արդի տեխնոլոգիաները օգնում Ձեզ ձեր աշխատանքում, կա՞ն ծրագրեր, հավելվածներ, որոնցից օգտվում եք:

-Տեխնոլոգիաները ունեն դրական ազդեցություն մեր ոլորտում, օրինակ՝ էլեկտրոնային գրացուցակն օգնում է խնայել ժամանակ և արագ գտնել այն գիրքը, որը փնտրում ես: Նաև մեծ առավելություն է այն, որ կարելի է համացանցից արագ գտնել այն գրականությունը, որն առկա չէ գրադարանում:

Իսկ, ո՞ր գրքերն են հաղթում. ավանդական, թե էլեկտրոնային գրքերը:

-Ի ուրախություն մեզ՝ ավանդական գրքերը դեռևս հաղթում են և ունեն դոմինանտություն էլեկտրոնայինի նկատմամբ, հուսանք, որ մշտապես կհաղթեն, և սերունդը չի կորցնի կապը իրական գրքի հետ:

Ընթերցանությունը կարևոր դերակատարում ունի անհատի ձևավորման տեսանկյունից, այս տեսանկյունից՝

Ինչպիսի՞ միջոցառումներ են կազմակերպվում՝ խթանելու սովորողների շրջանում ընթերցանությունը

-Նույն <<Նվիրիր գիրք>> նախագիծը, <<Գրքային թեմատիկ ցուցահանդեսները>>, ունենք նաև շատ կիրառական նախաձեռնություն դասախոս Ա. Կարապետյանի հետ, որը կոչվում է <<Գրքասերների ակումբ>>, որտեղ կազմակերպվում են գրքի քննարկումներ:

Ամփոփելով հարցազրույցը՝

Որո՞նք են ոլորտի մարտահրավերները և ինչպես դրանք վերածել հնարավորության.

-Առաջնային և հրատապ մարտահրավերը մասնագիտական հայալեզու նոր և առավել խորացված գրականության սակավությունն է, որը մեր ոլորտի համար իրական մարտահրավեր է և ունի փոխկապակցված բացասական ազդեցություն ոչ միայն մեր ոլորտի, այլև կրթական համակարգի համար:

Անգլալեզու գեղարվեստական գրականության սակավությունը ևս կարելի է համարել մարտահրավեր:

Ինչպես կմոտիվացնեք ընթերցել չսիրող համայնքին՝Ձեր տարբերակը.

-Չկա մարդ, ով չսիրի ընթերցանությունը պարզապես պետք է գտնել նրա նախասիրություններին համապատասխան գեղարվեստական ժանր:

Ձեր Խորհուրդները ներկա սերնդին

-Երբեք չդադարել ընթերցել, սովորել և կատարելագործվել սիրելի բնագավառում և միշտ հիշել, որ ընթերցանության միջոցով մենք ծանոթանում ենք այլոց կյանքի փորձին, որը մեզ հնարավորություն կտա կյանքում ճիշտ կողմնորոշվել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿՏՊՔ-Ի<<ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ>> ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, «ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ» (ԸՍՏ ՏՐԱՄՆՊՈՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԽՈՍ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ:



*Տիկին Հայրապետյան, **«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությունը,տեսականորեն առանցքային նշանակություն և դերակատարում կարող է ունենալ ոլորտային զարգացման տեսանկյունից**, սակայն գործնականում կատարված քայլերը դեռևս բարելավման և կատարելագործման կարիք ունեն:*

Սկսենք մասնագիտության արդիականությունից և կարևորությունից, այսպիսով՝ մի քանի հարց՝

Որքանո՞վ է մասնագիտությունը արդի աշխարհում և ինչպիսի՞ հեռանկարներ ունի այն ապագայում. Ձեր գնահատականը և կանխատեսումները:

-Տրանսպորտի ոլորտը զերզարգացում է ապրում աշխարհում տրանսպորտի տարբեր տեսակներով հանդերձ, համալրվում է ժամանակակից շարժակազմերով, տեխնիկական միջոցներով, հաղորդակցման ուղիներով, որն էլ հանգեցնում է մասնագիտության մշտական

բարձր պահանջարկին՝ ամբողջ աշխարհում: Ապագայի տեսանկյունից կցանկանամ մատնանշել, որ չնայած տրանսպորտի ոլորտը հանդիսանում է տնտեսության կարևորագույն ճյուղերից, այն իր բացասական ազդեցությամբ վտանգում է շրջակա միջավայրը, ըստ այդմ կարծում եմ ապագան պատկանելու է էկոլոգիապես մաքուր տրանսպորտի միջոցներին:

Ինչպե՞ս կգնահատեք իրավիճակը ՀՀ-ում, մասնագիտության արդիականության տեսանկյունից. Որքանո՞վ է այն պահանջված ներկայում:

-ՀՀ-ն ևս անմասն չի մնում ոլորտի զարգացման միտումներից, ոլորտը թե ներքին, թե արտաքին առումով առանցքային նշանակություն ունի: Առանց փոխադրումների կազմակերպման անհնար է պատկերացնել աշխարհը, ուստի ՀՀ-ում ոլորտի համար ևս առկա է բանիմաց մասնագետների պահանջարկ, ովքեր կկարողանան պատշաճ կազմակերպել փոխադրումների գործընթացը՝ ժամանակին կազմակերպել փոխադրրումները, իրականացնել քաղաքային,միջքաղաքային,միջպետական փոխադրումներ:

Ինչպիսի՞ նշանակություն ունի և կարող է ունենալ մասնագիտությունը երկրի տնտեսության և վերջինիս զարգացման համար:

-ՀՀ-ն ունի տրանսպորտային ուղիների սահմանափակ կիրառման հնարավորություն, և երկրի աշխարհաքաղաքական իրավիճակը թույլ չի տալիս առավելագույն տնտեսական օգուտ խաղել ոլորտի ընձեռած հնարավորություններից: Հիմնականում կիրառվում է օդային, ավտոմոբիլային և երկաթուղային, խողոդովակագծային տրանսպորտի տեսակները, որոնց գերակշիռ մասը բաժին է ընկնում ավտոմոբիլայինին: Ըստ այդմ՝ միայն արտաքին հարաբերությունների կարգավորումը կարող է դրական անդրադառնալ կոնկրետ ոլորտի և տնտեսության զարգացման վրա՝ տրանսպորտային ուղիների տեսանկյունից:

Մի քանի հարց այն մարդկանց անունից, ովքեր չեն կողմնորոշվում՝ ընտրե՞լ այս մասնագիտությունը, թե ոչ, ինչպե՞ս հասկանալ այն համապատասխան է իրենց, թե՝ ոչ:

Կփորձե՞ք մատչելի ներկայացնել մասնագիտությունը նրանց, ովքեր հետաքրքրված են ոլորտով, սակայն դեռ չեն կողմնորոշվում ընտրության հարցում տեղեկատվության սակավության կամ այլ պատճառներով. Ո՞վ է «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությունն ավարտած մասնագետը:

-Նախ գլոբալ առումով պետք է գիտակցել, որ ոլորտը պահանջում է պատասխանատվություն և ընթացիկ փոփոխություններ, ըստ այդմ՝ պետք է միշտ պատրաստ լինել անկանխատեսելի և բարդ իրավիճակների,որոնցով հենց դրսևորվում է ոլորտի առանձնահատկությունը:

Այս ոլորտի մասնագետը ստանում է <<Տեխնիկ կարգավար>>-ի որակավորում, որպեսզի անհատը հասկանա՝ արդյո՞ք իրեն համապատասխան է մասնագիտությունը, պետք է ունենա համապատասխան անձնային և մասնագիտական որակներ: Անձնային որակների առումով պետք է լինի՝ կարգապահ, նախաձեռնող, սթրեսակայուն, համբերատար, մշտապես ինքանազարգացող, իսկ մասնագիտական որակների տեսանկյունից՝ պետք է ունենա ճիշտ և արագ կողմնորոշվելու ունակություն, կազմակերպվածություն, կառավարման և, կազմակերպման հմտություններ:

Ինչպե՞ս է կազմակերպվում տեսական և պրակտիկ ուսուցումը:

-Տեսական ուսուցումը կազմակերպվում է մոդուլային ձևաչափով, ուսումնասիրում են չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներ, կիրառում ենք մասնագիտական ձեռնարկներ: Կարևոր

ձեռքբերում է երթևեկության հատուկ կաբինետը, որը համալրված է անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, ինչը նպաստում է գործնական պարապմունքների արդյունավետ անցկացմանը, որի արդյունքում տեսականորեն ուսումնասիրված նյութը գործնականում յուրացվում է ուսանողի կողմից: Կարևոր է շեշտել պրակտիկաների անցկացման փաստը, որոնք անցկացվում են տեխնիկապես համալրված լսարանում, ինչպես նաև կազմակերպվում են շրջայցեր՝ ոլորտի համապատասխան ձեռնարկություններ:

Կարևոր հմտություններ,կարողություններ, որոնց պետք է տիրապետի «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության մասնագետը:

-Հմտությունները բազմաթիվ են, սակայն կարելի է առանձնացնել հետևյալ առանցքայինները՝ պետք է մշակի երթուղիներ, կատարի շարժակազմի պահանջարկի հաշվարկներ, նախապատրաստի հերթափոխային առաջադրանքներ, հետևի տրանսպորտի երթևեկության գործընթացին, համակարգի ձեռնարկության ավտոպարկի աշխատանքը և այլն:

Չենք կարող չանդրադառնալ արդի տեխնոլոգիաներին:

Ինչպե՞ս են ազդում արդի տեխնոլոգիաները մասնագիտության վրա. Դրական և բացասական կողմերը:

-Կոնկրետ ոլորտի տեսանկյունից արդի տեխնոլոգիաները մեծամասամբ դրական ազդեցություն ունեն: Օրինակ՝ GPS համակարգը թույլ է տալիս հետևել ուղերթ դուրս եկած տրանսպորտի աշխատանքին, օպերատիվ հսկողություն իրականացնել:

Ինչպե՞ս օգտագործել դրանք, մասնագետի հմտությունների կատարելագործման տեսանկյունից, կա՞ն հստակ հավելվածներ, որոնք օգնում են կրթական՝ տեսական գործընթացում, ինչպես նաև պրակտիկ գործընթացում:

-Մշտապես և պարտադիր օգտագործում ենք համակարգչային տեխնոլոգիաները, որոնք օգնում են խնայել ժամանակ և դասապրոցեսը կազմակերպել արդյունավետ:

Վերջում անդրադառնանք ամփոփիչ հատվածին:

Ի՞նչը կփոխեիք կրթական գործընթացում՝ արդյունավետության բարելավման տեսանկյունից:

-Երևի թե, կնշեմ արտաքին շահառուների՝գործատուների հետ նոր կապերի հաստատումը և ընդլայնումը, որը հնարավորություն կտա պրակտիկ գործընթացը կազմակերպել առավել արդյունավետ:

Եվ, վերջում, խորհուրդ ներկա և ապագա մասնագետներին:

-Միշտ կատարելագործվեն, հետևեն ոլորտի զարգացումներին, զբաղվեն ինքնակրթությամբ և գիտակցեն, որ քանի դեռ մարդկությունը գոյություն ունի, ապա այս մասնագիտությունը կլինի արդի և պահանջված:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ <<ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ>> ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ք. ԱՐՇԱԿՅԱՆԻ ՀԵՏ:



Կա կարծիք, որ այն մարդիկ, ովքեր աշխատանքային, մասնագիտական առումով գործ ունեն թվերի հետ, համեմատաբար ռացիոնալ մտածելակերպի տեր են և մի փոքր զուրկ են հավելյալ զգացմունքայնությունից: Համաձա՞յն եք տեսակետի հետ:

-Համաձայն չեմ, քանի որ, ես ինքս, լինելով մաթեմատիկ, ունեմ խորը զգացմունքայնություն, իսկ ռացիոնալ մտածելակերպի առնչությամբ կարող եմ նշել, որ այն սուբյեկտիվ է՝ կախված անհատից:
Անդրադառնալով մասնագիտությանը՝ մի քանի հարց վերջինիս կարևորության, արդիականության վերաբերյալ:

<<Հաշվապահական հաշվառում>> մասնագիտությունը, գոյությունից ի վեր դասվելով պահանջված մասնագիտությունների շարքին, մշտապես պահանջված է եղել, իսկ ինչպիսի՞ն է այն այսօր և որքանո՞վ է արդի և կարևոր աշխարհում:

-Հաշվապահությունը՝ որպես մասնագիտություն արդի է և միշտ լինելու է, քանի որ ցանկացած կառույց, որը գործ ունի ֆինանսական գործունեության հետ ունի հաշվապահ մասնագետի պահանջ: Քանի մարդը արարում, աշխատում և ստեղծում է, ապա մասնագիտությունը մշտապես արդի կլինի: Առանցքային է ընդգծել, որ հաշվապահությունը հանդիսանում է տնտեսական գործարարության կարևորագույն օղակը, քանի որ տնտեսության իրական հատվածից է ձևավորվում պետական բյուջեի եկամուտների 90-95 տոկոսը: Սա է նաև պատճառը, որ պետական վերահսկողությունը հաշվապահական ոլորտի վրա իրականացվում է խստորեն:

Նշեք մասնագիտության առավելությունները և թերությունները՝ գլոբալ առումով:

-Առավելությունները բազմաթիվ են, առանցքային է համակարգչային ծրագրերի առկայությունը, որոնք հեշտացնում և արագացնում են աշխատանքը, ապահովում են թափանցիկությունը: Օրինակ <<1C>> և <<ՀԾ հաշվապահ>> ծրագրերը հեշտացնում են աշխատանքը՝ խնայելով և դարձնելով այն արդյունավետ: Ունենալով առանցքային առավելություններ՝ հարկ է մատնանշել, որ մասնագիտությունը համարվում է բարձր վարձատրվող մասնագիտություն: Մասնագետը, մասնակցելով ՀՀ ֆինանսների նախարարության լիցենզավորման քննությանը, կարող է ստանալ միջազգային ստանդարտներին համապատասխան սերտիֆիկատ, որն ընձեռում է մասնագիտական ահռելի հնարավորություններ աշխատելու ՀՀ-ում և արտերկրում: Կարևոր առավելություններից է, որ մասնագիտությունը հնարավորություն է տալիս աշխատել ցանկացած կետում՝ հեռավար տարբերակով, սակայն այս տարբերակը կիրառելի չէ խոշոր կազմակերպությունների դեպքում, քանի որ առկա է հսկայական փաստաթղթաշրջանառություն:
Ինչ վերաբերում է թերություններին, դրանք կապված են ծրագրերի հետ, քանի որ ծրագրերում կան օրենքից որոշակի շեղումներ, որոնք պետք է շտկվեն համապատասխան մասնագետների կողմից:

Որքանո՞վ է մասնագիտությունը ռիսկային, և արդյո՞ք ռիսկը արդարացնում է ընձեռած հնարավորությունը:
-Հաշվապահության մեջ ռիսկի գործոնը գրեթե բացառվում է, որովհետև պետք է լինել հմուտ մասնագետ՝ տիրապետելով հմտություններին, գիտելիքներին և աշխատել 100 տոկոս ճշգրտությամբ: Ռիսկի գործոնը առավել շատ կարելի է դիտարկել համակարգիչների ներմուծման տեսանկյունից, որը նվազեցնում է պահանջարկը մասնագետի նկատմամբ:

Հաշվապահ մասնագետի կատարյալ, դրան մոտ կերպարը:

-Կատարյալին մոտ մասնագետը պետք է տիրապետի ոլորտին հարող բոլոր օրենքներին՝ <<Հարկային օրենսգիրք>>, <<Աշխատանքային օրենսգիրք>>, <<Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքը>> և այլնին կատարելապես: Պետք է ունենա ճկուն միտք, և շատ կարևոր է աշխատասիրությունը:

Հարց մասնագիտությունը ընտրել ցանկացողի կողմից, ինչպե՞ս հասկանալ այն իրեն համապատասխան է, թե՞ ոչ:

-Ապագա մասնագետը պետք է հասկանա, արդյո՞ք ունի պատասխանատվության մեծ զգացում, քանի որ այն առանցքային ստանդարտ է մասնագիտության համար: Ապագա մասնագետը պետք է լինի խելամիտ և աշխատասեր, ձգտող, պրպտող՝ անընդհատ փոփոխվող օրենքների և օրենսդրական ակտերի, որոշումների պայմաններում: Ամենակարևոր պայմաններից է, որ պետք է սիրի աշխատել թվերի հետ:

Մի քանի հատկանիշ, որոնք որպես մասնագետ օգնում են կյանքում և խանգարում միաժամանակ:

-Մեծամասամբ օգնում են, քանի որ կիրառելով հաշվապահական հմտությունները՝ օգնում են արդյունավետ կազմակերպել ընտենական և ոչ աշխատանքային միջավայրը: Խանագարող հանգամանքներ չկան:

Մի քանի հարց բուն կրթական գործընթացից. ինչպե՞ս է անցնում պրակտիկ հատվածը հաստատությունում:

-Պրակտիկաները լինում են մի քանի տեսակ՝ ուսումնական պրակտիկա՝ տեսական ուսուցմամբ, ուսումնական պրակտիկա՝ առանց տեսական ուսուցմամբ և նախաավարտական պրակտիկա: Ուսումնական պրակտիկայի ընթացքում գործնական պարապմունքները կարող են ուղեկցվել տեսական ուսուցմամբ: Նախնական փուլում ուսանողները դրսևորում են իրենց հմտությունները, հաշվապահական հաշվառման վերաբերյալ իրենց գիտելիքները: Ուսումնական պրակտիկան առանց տեսական ուսուցման վերաբերում է հաշվառման բուն գործընթացին, որի արդյունքում ուսանողը պետք է ունենա հաշվապահական հաշվառումը ամբողջական վարելու հմտություններ: Նախաավարտական պրակտիկան պրակտիկաների ավարտական փուլն է և ենթադրում է գիտելիքների ամփոփում և նախապատրաստում պետական ամփոփիչ ատեստավորմանը:

Ի՞նչը կբարելավեիք կրթական համակարգում կրթական գործընթացի կազմակերպման տեսանկյունից:

-Բազմիցս բարձրացրել եմ հագեցվածության հարցը, անհրաժեշտ են համակարգչային ծրագրերով հագեցված լսարաններ: Ինչ վերաբերում է չափորոշչին, իմ կարծիքով բացակայում են համակարգչային ծրագրերի ուսուցմանը վերաբերող մոդուլներ, սակայն մեր առավելագույն հնարավորությունների շրջանակում, քննարկելով և ներդնելով նոր չափորոշիչը, արդյունքում առանձնացրել ենք որոշակի ժամաքանակ, որպեսզի տրամադրենք հաշվապահական ծրագրերի ուսուցմանը: Այդ գործընթացը ենթադրում է ոչ միայն տեսական գիտելիքների, այլև գործնական հմտությունների ձևավորում:
Ամփոփելով հատվածը՝ մի քանի հարց:

Ո՞վ կլինեիք մասնագիտությամբ, եթե չընտրեիք այս մասնագիտությունը:

-Մանկուց երազել եմ դառնալ մանկավարժ, բայց հետագայում հասկացել եմ, որ հաշվապահի մասնագիտությունն առավել հոգեհարազատ է ինձ, բայց արդյունքում մանկավարժը հաղթեց: Չնայած, երևի թե,ամբողջությամբ կցանկանայի նվիրվել հաշվապահությանը, քանի որ սիրում եմ տրամաբանությունը և թվերի հետ աշխատանքը:

Եվ վերջում կարո՞ղ եք մտաբերել մի քանի տարօրինակ հարց, որոնք հնչել են մասնագիտության վերաբերյալ:

-Օրինակ, որ ուսանողներս մշտապես հարցնում են.
- <<Ընկեր Արշակյան հաշվային պլանը անգիր գիտ՞եք>>:
Բնականաբար, պատասխանում եմ ոչ, քանի որ և հնարավոր չէ, և չկա անհրաժեշտություն՝ օգտվելու ամբողջ հաշվային պլանից: Ամբողջ կյանքում աշխատելով՝ կարող ենք օգտվել ընդամենը մի քանի տասնյակ հաշիվներից: Ջուտ պատկերացում կազմելու համար գոյություն ունեն 1000-ից ավել հաշիվներ, որոնք միջազգային ստանդարտներով հաշիվներ են: Նախկինում 99 հաշիվ էր, որոնց անխտիր տիրապետում էինք:
Շնորհակալություն հարցազրույցի համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԱԴՐԵՐԻ ՆԱԽԿԻՆ ՏԵՍՈՒՉ Ք. ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ:

Երկար տարիներ աշխատելով որպես կադրերի տեսուչ՝ այս բնագավառում ունեք հսկայական փորձառություն՝ չնայած, որ այսօր զբաղեցնում եք ուսումնական գծով փոխտնօրենի պաշտոնը: Փորձելով ներկայացնել Ձեր երկարամյա գործունեության բնագավառը՝ օգնեք բացահայտել այն Ձեր գաղափարներով և փորձով:
Կադրերի հետ աշխատանքը, դասվելով բարդագույնների շարքին, պահանջում է մանրակրկիտ աշխատանք և ահռելի ջանքեր: Փորձենք մի քանի ընդհանրական հարցերի միջոցով զուգահեռել անհատականության և մասնագիտական անհատականության ընդհանրությունները և տարբերությունները՝ փոխկապակցելով մասնագիտական առանձնահատկությունների և կադրերի ստորաբաժանման գործունեության հետ:

Կարո՞ղ եք նշել անհատականության մի քանի հատկանիշ, որոնք արժևորում եք Ձեր մեջ և մի քանիսը որպես կադրերի մասնագետ, որոնք կարևորում եք:

-Ամենակարևորը գործս կիսատ չթողնելու, ավարտին հասցնելու կարողությունն ու հատկանիշն է. երբեք կիսատ չեմ թողնում սկսածս գործը, միշտ գիտեմ, թե ինչ եմ ցանկանում,

և գլխավորը ցանկացած գործի պարագայում՝ նախանշածս վերջնարդյունքի ապահովում:Թվարկվածները ամենակարևորներն են ինձ համար:
Ընդհանուր առմամբ և՛ մասնագիտական, և՛ անհատական հատկանիշները համադրվում են և օգնում միմյանց թե՛ կյանքում, թե՛ աշխատանքում:

Ինչպե՞ս կգնահատեք կադրերի ստորաբաժանման, բաժնի կարևորությունը կազմակերպության համար:

Կազմակերպությունները գիտակցում են վերջինիս կարևորությունը, թե նախընտրում են շրջանցել:
-Կա կարծիք, որ կադրերն են որոշում ամեն բան, որը լրիվությամբ արտացոլում է կադրերի ստորաբաժանման գաղափարախոսությունը: Կադրերի ստորաբաժանումը յուրաքանչյուր կազմակերպության առանցքային ստորաբաժանումներից է, քանի որ գործ ունի անմիջապես աշխատակազմի, մարդկային կապիտալի հետ: Ցանկացած կազմակերպության սիրտը կադրերն են, ինչից կախված է կազմակերպության արդյունավետ գործունեությունը, իսկ այն կազմակերպությունները, որոնք շրջանցում և անտեսում են կադրերի ստորաբաժանմանը չեն կարող իրականացնել արդյունավետ գործունեություն:

Առավել լոկալիզացնելով՝ ինչպե՞ս կգնահատեք կադրերի մասնագետի դերն ու կարևորությունը կրթական կազմակերպությունների տեսանկյունից, ինչպիսի՞ առանձնահատկություններով է այն դրսևորվում կրթական ոլորտում:

-Որպես կադրերի բաժին՝ ամենակարևոր առաքելությունը կրթական գործընթացում համարում եմ կադրերի շարունակական վերապատրաստման,զարգացման ապահովումը և ճիշտ, համապատասխան կադրերի ընտրությունը: Կադրերի ընտրությունը ուսումնական հաստատություններում իրականացվում է մրցութային կարգով,իսկ կադրերի վերարակավորումը մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների միջոցով, որոնց մասնակցում են կադրերը: Մանկավարժի շարունակական կատարելագործման ապահովումը կրթական ոլորտի համար առաջին առանձնահատկությունն է և կարևոր գործը, քանի որ կրթական ոլորտը զգայուն է դինամիկայի հանդեպ, իսկ գլոբալիզացիայի պայմաններում չես կարող խուսափել փոփոխություններից, որոնք տեղի են ունենում ամեն օր. նորամուծություններին, նորարարություններին ականջալուր լինելը առանցքային է կրթական ոլորտի համար, քանզի առանց դրանց տիրապետելու մասնագետը չի կարող պատրաստել շուկայի պահանջներին համապատասխան մասնագետ:

Իսկ ինչպիսի՞ ներդրում կադրերի բաժինը կարող է ունենալ կրթական կազմակերպությունների ճանաչելիության, վստահության այլ կերպ ասված, բրենդի ձևավորման տեսակյունից:

-Հարցին կպատասխանեմ հենց վերարակավորման գործընթացի համատեքստում: Յուրաքանչյուր կազմակերպության բրենդը ամբողջությամբ վերցված թիմն է՝ աշխատակազմը, ապագա մասնագետները, որոնց միջոցով և շնորհիվ ձևավորվում է կազմակերպության վերաբերյալ շահառուների, հասարակության ընկալումը, իսկ

կազմակերպության բրենդը տեսանելի է վերջնարդյունքում՝ շուկային տրված մասնագետի մասնագիտական և հարակից կարողությունների, հմտությունների միջոցով:

Ինչպիսի՞ խոչընդոտներով է առանձնանում կադրերի բաժնի մասնագետի գործունեությունը:

-Ոչ ոքի չես կարող ստիպել, որ մասնակցի վերառրակավորման գործընթացների, չես կարող ստիպել որ փորձի կատարելագործվել որպես մասնագետ՝ իրական աճ գրանցելու տեսանկյունից: Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ միջին մասնագիտական կրթական հաստատություններում տարակարգ, կամ պարտադիր ատեստավորման մեխանիզմներ ներդրված չեն, այս ամենը որոշ չափով կարող են հանդիսանալ խոչընդոտ: Որպես լուծում՝ կարելի է խանդավառել, մոտիվացնել սեփական օրինակով՝ վերակատարելագործվելու, մասնագիտական հմտությունները զարգացնելու տեսանկյունից:

Ինչո՞վ է առանձնանում և որո՞նք են Ձեր գործունեության մասով այն ուժեղ կողմերը, որով հաստատությունը առանձնանում է կադրերին ուղղված վարած քաղաքականությամբ:

-ԿՏՊՔ-ն ունի կադրային հսկայական ռեզերվ, եթե ունենանք կադրի պակաս, ունենք արժանի մասնագետի ընտրության լայն հնարավորություն, որը մեր ամենաուժեղ կողմն է, քանի որ մենք գիտակցում ենք, որ կրթական կազմակերպության արդյունավետ գործունեության հիմքը կոմպետենտ մասնագետն է, իսկ վերջինիս ներգրավման համար հաստատությունը ջանք չի խնայում: Սա առանցքային ուժեղ կողմերից է, քանի որ ոչ բոլորն ունեն նման կարևոր գործիքակազմ՝ որպես ուժեղ կողմ: Մյուս ուժեղ կողմը մեր՝ անձնակազմիս նորարությունները ընդունելու, կիրառելու պատրաստակամությունն է: Երբ 2020 թվականին <<COVID 19 >> համաճարակի պատճառով առկա ուսուցումը չեղարկվել էր, հաստատության անձնակազմը պատրաստակամ, արագ ըմբռնեց հեռավար ուսուցման նոր ներդրված համակարգերը, որի արդյունքում կրթական գործընթացը հնարավորինս կազմակերպվեց արդյունավետ:

Ինչպիսի՞ հնարավորություններ են առկա կադրերի ոլորտում, որոնք կցանկանաք ներդնել և կարող են դրական անդրադառնալ կազմակերպության գործունեության համար:

-Ետ չմնալով տեղի ունեցող դրական տեղաշարժերից՝ կարևորում եմ միջազգային տարբեր ծրագրերին մասնակցությունը, որոնք զարգացման կարևոր հնարավորություն կարող են հանդիսանալ, ցավոք, այստեղ բախվում ենք օտար լեզվի իմացության խնդրի հետ: Օրինակ՝ այժմ առկա են անգլերեն լեզվով բազմապիսի վերապատրաստումներ, որոնք շատերին լեզվի իմացության պատճառով հասանելի չեն:

Կա՞ն երկրներ, որոնք կադրերի ներգրավման առումով՝ կրթական ոլորտում ունեն էտալոնային փորձ, որը կնախընտրեիք հարմարեցնել և տեղայնացնել:

-Համեմատություններ որպես էդպիսին չեմ անցկացրել, սակայն կարծում եմ՝ եվրոպական երկրների փորձը կարող է տարածելի լինել իր արդյունավետությամբ,իսկ այս դիտանկյունից

խորհրդային փորձին չեմ ցանկանում անդրադարձ կատարել: Փորձելով այժմ կոտրել խորհրդային գործելաոճը՝ նպատակային ներդրվել է մրցութային կարգը: Մատնանշելով արտասահմանյան փորձի դրական տեղաշարժերից՝ փոխվել է աշխատանքի ներկայանալու ձևաչափը, որը բացակայում էր խորհրդային տարիներին: Ներդնելով նոր մոտեցումները, ճկուն մեխանիզմներ՝ նպաստում ենք նպատակային կադրի ընտրությանը:Խոսելով համեմատականներից և ներգրավման գործընթացից՝ ողջունելի եմ համարում հարցազրույցներին մասնակցության փորձառությունը, ուղեկցող նամակներով առաջնորդվելու կարողությունը, ինքնակենսագրականների ձևաչափը: Այս ամենը նոր շունչ և հնարավորություններ են ընձեռում ոլորտին՝ ընտրելու համապատասխան հմտություններով համապատասխան կադր:

Ինչպիսի՞ քաղաքականություն է վարում հաստատությունը կադրերի ներգրավումը արդյունավետ իրականացնելու համար:

- Ներգրավելով կադրերին՝ առաջնորդվում ենք մրցութային համակարգով, այսինքն՝ եթե միևնույն հաստիքի համար դիմում են մի քանի հոգի, ապա նախապատվությունը տրվում է նրան, ով համակարգային առումով ցուցաբերում է բարձր ցուցանիշ: Հաշվի են առնվում, բնականաբար, մասնագիտական, անձնական, մանկավարժական որակները և հմտությունները, որոնք նաև ստուգվում են իրավիճակային խնդիրների առաջադրման ժամանակ:

Մի քանի հատկանիշ, որոնք պետք է ունենա մասնագետը և մի քանիսը, որոնք չպետք է ունենա:

-Պետք է լինի կրեատիվ, պրպտող, ամենագլխավորը պետք է կարողանա իրականացնել անձի հոգեբանական վերլուծություն: Աշխատելով ոլորտում՝ չի կարող չունենալ խանդավառություն, քանզի առանց այս հատկանիշի անհնար է աշխատել որպես կադրերի մասնագետ, պետք է ունենա վառ երևակայություն: Ամենակարևորը չպետք է լինի դանդաղկոտ, և, իհարկե, ոչ խանդավառ մարդը չի կարող աշխատել որպես մասնագետ:

Ի՞նչը կացանկանայիք, որ փոխվեր ոլորտում և՛ տեխնիկական, և՛ գաղափարական առումներով:

-Նախ՝ գաղափարական առումով անընդունելի եմ համարում հաստիքի անվանումը: Միջին ուսումնական կրթական հաստատությունում հաստիքը կոչվում է <<Կադրերի տեսուչ>>, որը խորհրդային ժամանակներից եկած անվանում է, որը արդեն իսկ տրամադրող գաղափարային տարր չէ, քանի որ իր մեջ կրում է խստագույն վերահսկողության տարր, որը ճնշող գործոն կարող է հանդիսանալ: Ներկայումս գոյություն ունեն <<Մարդկային ռեսուրսների մասնագետ>>, <<Աշխատակազմի ղեկավար>> ձևակերպմամբ անվանումներ, որոնք առավել հումանիստ ձևակերպումներ են և լրիվությամբ համապատասխանում են այն գործառույթներին, որոնք իրականացնում է կադրերի մասնագետը: Կցանկանայի պետական ուսումնական հաստատություններում այս ձևակերպումը փոխվեր, վերանայվեր, քանի որ գաղափարական առումով, սա ևս կարևոր է: Ցանկալի և նպատակային է, որ անվանումը իր

մեջ կրեր ոչ թե ստուգողի, վերահսկողի, այլ առաջնորդողի, զարգացնողի, հորդորողի տարրերը: Կարևորելով փոփոխությունները՝ կցանկանամ մատնանշել մի փաստ, որ, ցավոք, կադրերի մասնագետը չունի անհրաժեշտ հնարավորության ազատություն՝ ընտրելու կադր, քանի որ մասնագետի լծակները սահմանափակ են: Դրական կլիներ, որ կադրերի մասնագետը առաջնային դերակատարում ունենար՝ ընտրության հարցում:

Աշխատանքային օրենսգիրքը հնարավորություն տալի՞ս է հնարավորինս պաշտպանել երկուստեք և՛ աշխատողի, և՛ գործատուի իրավունքները, թե հակասությունները անխուսափելի են:

-Աշխատանքային օրենսգրքի վերջին փոփոխությունները եղել են այս տարվա ամռանը, փոփոխվել են մոտ 100 հոդվածներ: Օրենսգիրքը տալիս է և գործատուի, և աշխատողի իրավունքների պաշտպանության լայն և ճկուն գործիքակազմ, եթե, իհարկե, կարողանում են ճիշտ և նպատակային կիրառել այն: Չեմ կարող չասել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը բավականին հումանիստական օրենսգիրք է աշխատողի տեսանկյունից, միևնույն ժամանակ այն լայն գործիքակազմ է ընձեռում աշխատողի հանդեպ աշխատանքային պարտականությունների և այլ թերացումների դեպքում՝ սահմանելու համապատասխան կարգապահական և այլ տույժեր:

Օրենսգրքում ինչպիսի՞ դրույթ կավելացնեիք, կամ որո՞նք կփոփոխեիք՝ բարելավելով այն:

-Եթե չեմ սխալվում 110-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է աշխատանքից ազատման դիմումներին, որտեղ աշխատողը եթե գրում է դիմում, կարող է 7 օրյա ժամկետում ազատվել աշխատանքից, սակայն այդ դրույթը չեմ ընդունում, որովհետև առավելագույնը պետք է լինի 1 օրյա ժամկետ: Կամ, օրինակ, գոյություն ունի ընթացակարգ, որի շնորհիվ կարող է եռօրյա ժամկետում ետ վերցնել ազատման դիմումը, սա նույնպես չեմ ընդունում, քանի որ եթե հստակ որոշում է կայացվել, պետք է նույն օրը, կամ առավելագույնը մեկ օր հետո ազատվել աշխատանքից:

Ինչպիսի՞ն է ԿՏՊՔ կադրը՝ որպես էտալոն:

-Որակի ապահովման քաղաքականության ներդրման արդյունքում՝ քոլեջում ուսանողների շրջանում իրականացվող հարցումները ևս մեկ անգամ փաստարկեցին, որ քոլեջի դասախոսական կազմի մեծամասնությունը իրենց գործի նվիրյալներն են, ինչը արդեն ամեն բան ասում է կադրի՝ որպես էտալոնի կայացման հարցում: Հարցումների արդյունքում ակնհայտ դարձավ, որ մեր ուսանողների համար ԿՏՊՔ դասախոսական անձնակազմը համարվում է հաստատության ուժեղ կողմը: Այս ամենը և՛ հաստատության, և՛ ուսանողների, և՛ կադրերի ստորաբաժանման ձեռքբերումն է:

Եվ, վերջում տարօրինակ կամ զավեշտալի դեպք Ձեր պրակտիկայում, որը երբեք չեք մոռանա:

-Նման դեպքեր շատ եմ ունեցել պրակտիկայում, օրինակ այս մեկը երբեք չեմ մոռանա. եկել են հարցազրույցի և հատված կար, որտեղ պետք էր ձեռագիր տվյալ լրացնել և անձը, ով ցանկանում էր ընդունվել աշխատանքի ասում է.
-<<Գիտեք էնքան հայերեն չեմ գրել մոռացել եմ տառերը, կարո՞ղ եմ անգլերեն գրել>>: Ասում եմ. << Ինչպե՞ս թե, անգլերեն գիտե՞ք>>, ասում է. <<Հա բա իհարկե, էն որ sms են գրում այ էդպես>>: Նկատի ուներ լատինատառ ասվածը:
Ուսանողների հետ նույնպես նմանատիպ դեպքեր լինում են, այս մեկը, որը կպատմեմ զավեշտալի չէր, պարզապես շատ հետաքրքիր դեպք էր: Այս տարի ընդունելությանը զույգ եղբայրները և նրանց ընկերը ընդունելության ժամանակ չէին կողմնորոշվում որտեղ դիմել, զույգերի մայրը խորհուրդ է տալիս գնալ այս կամ այն բաժինը, բայց երիտասարդները, երեքով միաժամանակ ներողություն խնդրեցին և շատ խրոխտ և լուրջ գնացին խորհրդակցության, որպեսզի որոշեն, թե ո՞ր մասնագիտությունը ընտրել, արդյունքում որոշել էին <<Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ>> մասնագիտությունը, բայց նրանցից մեկը կարողացավ ընդունվել: Այս դեպքը շատ տպավորիչ էր և առանձնանում էր երիտասարդների մտածողությամբ և թիմային աշխատանքով, որը շատ գովելի էր:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿՏՊՔ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Լ. ԱԲԵԼՅԱՆԻ ՀԵՏ:

Ինչպիսի՞ն պիտի լինի կրթական հաստատության որակի ապահովման մասնագետը, որո՞նք են առանցքային որակները:

-Առհասարակ, գտնում եմ, որ, անկախ մասնագիտությունից, որ ոլորտում էլ լինի մարդը ամենակարևոր հատկանիշը, որ պետք է ունենա հայրենասիրությունն է. եթե սիրում ես հայրենիքդ, ապա ձգտում ես անել առավելագույնը գործիդ մեջ, իսկ ինչ վերաբերում է հենց որակի ապահովման մասնագետին, ապա կրթական հաստատության որակի ապահովման մասնագետը միանշանակ պետք է իր աշխատանքներում առաջնորդվի անաչառության, արդարամտության, անկողմնակալության, հավասարության սկզբունքներով և լինի իրատես: Նաև, կարևորագույն հատկանիշներից օբյեկտիվությունն է, ինչպես նաև փաստերը անկողմնակալ վերլուծելու կարողությունը: Որակի ապահովման մասնագետը պետք է ունենա բաց միտք՝ տարբեր տեսակետներ, կարծիքներ ընդունելու, տարբեր առաջարկներով և լուծումներով հանդես գալու նպատակով: Շատ կարևոր է, որ որակի ապահովման մասնագետը երբեք չդադարի ինքնազարգացումը, ամենօրյա քրտնաջան աշխատանք պետք է իրականացնի և միշտ փնտրի ճիշտ և արդյունավետ լուծումներ:

Անհատական հատկանիշներից որո՞նք են օգնում մասնագիտական բնագավառում:

-Առաջին տեղում պատասխանատվությունն է՝ սահմանված նպատակներին հետևողականորեն ձգտելու և հասնելու համառությունը: Ամենակարևորը սերն է աշխատանքի ու գործի նկատմամբ, քանի որ համոզված եմ՝ այն, ինչ անում ես սիրով ու նվիրվածությամբ, միանշանակ տալիս է արդյունք:

Կա՞ն անձնային հատկանիշներ, որոնք խոչընդոտում են:

-Չափից դուրս պահանջկոտությունը և խստությունը ինքս իմ հանդեպ երբեմն խանգարում են, բայց դա միաժամանակ նաև իմ շարժիչ ուժն է. առաջին հերթին պահանջկոտ պետք է լինես ինքդ քո հանդեպ, որպեսզի կարողանաս պահանջել դիմացինից. շատ ինքնաքննադատ եմ, այն ինձ օգնում է աշխատանքային գործընթացում:

Ինչպիսի՞ մոտեցում եք կիրառում կրթական ծրագրերին՝ որպես որակի ապահովման բաղադրատարր:

-Իմ մոտեցմամբ կրթական ծրագրերը կարող են լիարժեք համարվել իրականացված, եթե մենք կարողանանք ապահովել տվյալ կրթական ծրագրին և մասնագիտությանը ներկայացվող վերջնարդյունքներին համապատասխան հմտություններով և կարողություններով ուսանողներ՝ մասնագետներ, ովքեր կունենան մասնագիտական բարձր գիտելիքներ և համապատասխան կարողություններ՝ կիրառելու իրենց ոլորտում. վստահ եմ, որ լավ մասնագետը անպայման աշխատաշուկայում գտնելու է իր տեղը: Կրթության որակի ցուցիչը մեր շրջանավարտներն են, և այն, թե որքանով են կարողանում աշխատաշուկայում գտնել իրենց տեղը, կայանալ, կարիերա ստեղծել:

Կարո՞ղ եք նշել որակի ապահովման համակարգում հաջողված փորձի օրինակ:

-Փորձել ենք ներդնել մեր աշխատանքների տարեկան պլանավորման և գործընթացների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմման արդյունավետ մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս չափելի դարձնել մեր աշխատանքների արդյունավետությունը: Որակի ապահովման գործող մեխանիզմներից, որը լիարժեք կայացել է, գործում է ներքին շահակիցների՝ ուսանողների և դասախոսների կարիքների և խնդիրների վերհանման և գնահատման տարբեր մեխանիզմները: Մենք բավականին բարելավել ենք նաև քննարկումների, վերլուծությունների մշակույթը. սա ևս կարևոր քայլ է որակի ապահովման գործընթացներում:

Ինչպե՞ս կարելի է ապահովել գնահատման մեխանիզմների համահունչությունը ուսումնական նպատակներին՝ որպես անաչառության ապահովման հիմնասյուն:

-Վերլուծություններն իրականացնում եմ՝ հիմք ընդունելով առկա փաստերը և հաշվի առնելով խնդրին առնչվող բոլոր կողմերի տեսակետները՝ համադրելով դրանք, որպեսզի լուծումները լինեն անաչառ և օբյեկտիվ:

Ո՞րն է Ձեր տեսանկյունից արդյունավետ մոտեցում՝ չափելու ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

-Լինելով կարճ՝ շեշտեմ՝ այն մասնագետը, որին մենք պատրաստում ենք, արտացոլում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Մեր աշխատանքների ու գործունեության գնահատման ցուցիչը մեր շրջանավարտն է:

Եղե՞լ է իրավիճակ, երբ առաջ են եկել կրթական անարդյունավետ գործընթացներ, եթե այո, ապա ինչպե՞ս եք հասցեագրել և բարելավել:

-Եթե կան խնդիրներ, որոնք որակի ապահովման կնետրոնի գործունեության շրջանակում են, ինքս եմ տալիս լուծումներ, իսկ, եթե ոչ, ապա խնդիրները ներկայացվում են համապատասխան օղակներին՝ անհրաժեշտ լուծումներ և որոշումներ կայացնելու նպատակով. կրթական ծրագրերի մասով եղել է առաջարկ, որ կրթական ծրագրերի պատասխանատուները կրթական ծրագրերի արդյունավետությունը, սովորողներին տրվող հանձնարարությունները քննարկեն համապատասխան նիստերում՝ շեշտադրելով ուսանողների ինքնուրույն վերլուծական մտքի, գործնական կարողությունների զարգացումը: Որակի կենտրոնը իր գործառույթների շրջանակում իրականացրել է դասալսումներ և դուրս է բերել դասախոսների մանկավարժամեթոդական կատարելագործման կարիք, որի արդյունքում քոլեջի ներսում կազմակերպվել է մեթոդական վերապատրաստում: Որակի կենտրոնի կողմից նաև վերանայվել են մի շարք ընթացակարգեր՝ բարելավելով դրանք, իսկ ընթացիկ աշխատանքների արդյունքների վերլուծությունների հիման վրա օրինակ՝ վերանայվել է քոլեջի որակի ապահովման քաղաքականությունը, որակի կենտրոնի կանոնակարգը, դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման կանոնակարգը, հարցումների անկացման կանոնակարգը, դասալսումների անցկացման և կազմակերպման կանոնակարգը և այլն:

Ինչպե՞ս է նորագույն տեխնոլոգիան օգնում՝ կազմակերպելու որակի ապահովման գործընթացները:

-Նոր տեխնոլոգիաները օգնում են հարցումների անցկացման գործընթացը կազմակերպել արագ և արդյունավետ, ինչպես նաև ներքին փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգված կազմակերպել:

Եղե՞լ է դեպք, երբ նորագույն տեխնոլոգիաները բացասական են անդրադարձել աշխատանքային գործընթացի վրա:

-Ընթացիկ խնդիրները չնչին են՝ լինելով տեխնիկական, թեև ժամանակի ընթացքում հասկացա, թե որքան կարևոր և դրական է տեխնոլոգիայի կիրառությունը՝ ապահովելու իրականացված աշխատանքների փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակները.

Ինչպե՞ս եք համագործակցում դասախոսական կազմի հետ՝ ապահովելու կրթական գործընթացի որակական կողմը:

-Համագործակցությունը ապահովվում է որակի կողմից կազմակերպվող հանդիպում-քննարկումներով, նիստերով և անհատական հանդիպումներով, ամենատարբեր հարցումներով, քանի որ որակի ապահովման համակարգը կարող է կայանալ միմիայն, եթե բոլորը գիտակցում են իրենց պատասխանատվությունը այդ համակարգում, և առկա է

համագործակցային և թիմային աշխատանք: Միայն նշված պարագայում կարող ենք արձանագրել, որ կունենանք որակի ապահովման արդյունավետ համակարգ:

Ուսանողակենտրոն հարց. կարո՞ղ եք նշել փորձ, որն ուղղակիորեն դրական է անդրադարձել ուսանողների համար՝ կրթական գործընթացը արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից:

-Ուսանողները դրական են համարում այն հարթակը, որը տրվել է որակի կենտրոնի կողմից՝ բարձրաձայնելու իրենց հուզող հարցերը, խնդիրները և կողմ են, որ հարցումները լինեն պարբերաբար և շարունակական, քանի որ այս հարթակի միջոցով ուսանողները զգում են իրենց ձայնի կարևորությունը իրենց առնչվող խդիրների լուծման հարցում. հավելեմ, որ իմ աշխատանքների առանցքում ուսանողակենտրոն մոտեցումներն են. ամեն աշխատանք հանուն և միմիայն ուսանողների համար բարելավված միջավայրի և որակյալ կրթության ապահովման համար է: Այլ սկզբունք և նպատակ չի կարող լինել քոլեջի <<Որակի ապահովման կենտրոն>>-ի աշխատանքներում:

Եվ վերջում Ձեր խորհուրդը ներկա, ապագա սերնդին:

-Մեր ներկա սերունդը վաղվա ապագայի հենքն է. կցանկանայի, որ բոլորը գիտակցեին կրթության՝ կիրթ և գրագետ լինելու կարևորությունը անհատի և քաղաքացու, առհասարակ մարդու կյանքում, քանի որ որակյալ կրթությունն է յուրաքանչյուր ուժեղ և կայացած պետության կարևորագույն հիմնաքարը. կցանկանայի նաև, որ մեր սերունդը առավել հետևողական և պահանջատեր լինի որակյալ կրթություն ստանալու իր իրավունքին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՓՈԽՏՆՕՐԵՆ Վ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԵՏ:

Ո՞րն է արդյունավետ պլանավորման բանաձևը Ձեր աշխատանքներում:

-Բանաձևը պարզ է. ամեն բան պետք է արվի ժամանակին՝ առաջնորդվելով պարտաճանաչությամբ, կարգապահությամբ՝ գործելով օրենքի սահմաններում:

Ինչի՞ն եք ուշադրություն դարձնում պլանավորման աշխատանքներում:

-Առանցքային ուշադրություն եմ դարձնում նորմատիվ իրավական ակտերին, պետական կրթական չափորոշիչներին, կադրերի որակական ցուցանիշներին՝ հիմք ընդունելով աշխատանքային բազմամյա փորձառությունս: Աշխատելով կադրերի հետ՝ կարևորում եմ դրսևորել աշխատանքային անհատական մոտեցում, որն օգնում է աշխատանքները պլանավորել արդյունավետ:

Ինչպե՞ս եք համակարգում ուսումնական գործընթացին մասնակցող ստորաբաժանումների աշխատանքը:

-Համակարգելով օրինաչափության սկզբունքի հիման վրա՝ պահանջում եմ, որ յուրաքանչյուր օղակ իրականացնի իրեն վերապահված պարտականությունները՝ ձևավորելով արդյունավետ համագործակցություն:

Որքա՞ն հաճախ եք իրականացնում փոփոխություններ՝ բարելավելու ուսումնական գործընթացը:

-Անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ համապատասխան բնագավառներում, եթե պահպանողականությունը հանգեցնում է անարդյունավետության, ապա չեմ քաջալերում:

Կարո՞ղ եք առանձնացնել կրթական ծրագրերում բարեփոխման հաջողված օրինակ:

-Առանձնակի փոփոխություններ տեղի են ունեցել ԴՈՒԱԼ կրթական ծրագրում, որը ներդրված է <<Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ>> մասնագիտացմամբ: Իրագործվել են արմատական փոփոխություններ և գործատուների մակարդակում, և ներքին մակարդակում՝ բարելավելով կրթական գործընթացը: Առաջնորդվելով կրթական գործընթացի կատարելագործմամբ՝ <<Հաշվապահական հաշվառում>> մասնագիտացմամբ ևս իրականացվել են որոշակի փոփոխություններ, որոնք բարելավել են կրթական գործընթացը:

Ինչպե՞ս եք իրականացնում ուսումնական գործընթացի արդյունավետության մշտադիտարկումը:

-Մշտադիտարկումը իրականացվում է տարբեր վերահսկողական միջոցներով, որոնք օգնում են գնահատել արդյունավետությունը (դասալսումներ, բաց դասեր, հետազոտական աշխատանքներ և այլն):

Ինչպիսի՞ նորամուծություններ եք կիրառում կրթական գործընթացում՝ դասապրոցեսի անցկացման մասով:

-Տարբեր մասնագիտությունների մասով առկա են անհրաժեշտ հնարավորությունները՝ կազմակերպելու դասապրոցեսը արդի պահանջներին համապատասխան: Առկա կաբինետները, գործատու կազմակերպությունները հագեցած են անհրաժեշտ հնարավորություններով, չնայած համապատասխան միջոցներով հագեցվածության կարիք մշտապես առաջանում է:

Վերջին փոփոխությունները, որոնք իրականացրել եք մասնագիտությունների կտրվածքով:

-Վերջին փոփոխություններից կառանձնացնեմ <<Ատամնատեխնիկական գործ>> մասնագիտության համար նոր լսարանների ստեղծումը, հաստատվել են նոր համագործակցություններ գործատու կազմակերպությունների հետ: Հաստատվում են անհրաժեշտ համագործակցություններ մասնավոր հատվածի հետ, որոնք օգնում են կրթական գործընթացը դարձնել արդյունավետ:

Եվ, վերջում, ինչպիսի՞ առաջնահերթություններ եք նախանշել այս տարի՝ պլանավորելով այն:

-Առաջնայիններից է ուսումնառության որակական ցուցանիշների բարձրացումը,անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ առավել արդյունավետ կազմակերպելու ուսումնական գործընթացը, կադրերի վերապատրաստման իրականացումը: Թվարկվածները հնարավորություն կընձեռեն առավել արդյունավետ պլանավորել և մեկնարկել տարին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Ժ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ:

Ի՞նչն է մոտիվացնում Ձեզ՝ Ձեր աշխատանքում:

-Մոտիվացիան կրթության հաջողության գրավականն է. Յուրաքանչյուրիս կատարած աշխատանքի և վերջնարդյունքի մեջ կարևորն այն է, թե ինչպես ես վերաբերվում աշխատանքին, թո որքան սրտացավությամբ ես վերաբերվում քո արած աշխատանքի յուրաքանչյուր մանրուք թվացող մասնիկներին, որքան սեր, ջերմություն ու նվիրվածություն ես ներդնում քո աշխատանքի մեջ: Ստանալով այն՝ ինչը շարունակաբար պարգևում ես:

Այսպիսով, ամբողջացնելով աշխատանքիս արդյունքը՝ մոտիվացվում եմ ուսանողների, շրջանավարտների կողմից տրվող գնահատականով:

Լինելով ոլորտում երկար տարիներ՝ ինչպիսի՞ն էր այն 15 տարի առաջ և այսօր.

-Ոլորտում ծավալում եմ գործունեությունս 2013 թ.-ից: Զուգահեռներ անցկացնելով 15 տարի առաջ և այսօր՝ կարող եմ ասել, որ սկզբնականում բարդ էր ներդնել այն ամենը ինչն անհրաժեշտ էր ոլորտին՝ ծավալելու արդյունավետ գործունեություն, բայց շարունակական և մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ բարելավվեց և շարունակում է բարելավվել և

կատարելագործվել ոլորտը: Ասվածի վկայությունն է հանդիսանում այն, որ մշտադիտարկման արդյունքում Հայաստանի կարիերայի ուղղորդման ազգային ծրագիրը ՏՀԶԿ-ի կողմից ճանաչվեց լավագույն պրակտիկայի օրինակ՝ կիրառվելով այնպիսի երկրներում ինչպիսիք են Կանադան, Ֆինլանդիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն: Այսպիսով, շարունակական աշխատանքի արդյունքում մեր ազգային փորձն ու մեթոդաբանությունը ոչ միայն տարածաշրջանում, այլև միջազգային պրակտիկայում օրինակելի է:

Որո՞նք են Կարիերայի կենտրոնի առանցքային նպատակները:

-Կարիերայի կենտրոնի առանցքային նպատակը մասնագիտության ընտրության բարդ գործընթացում մասնագիտական կողմնորոշման նպատակային տրամադրումն է՝ ուղղորդելով մասնագիտության գիտակցված ընտրության: Այս գործընթացը ենթադրում է համապատասխան գործիքակազմի կիրառում, որը ներառում է համագործակցությունները գործատուների հետ՝ նպաստելու ուսանողների մասնագիտական զարգացմանը: Կարիերայի կենտրոնը իր նպատակների իրագործման շրջանակում կազմակերպում է նաև ոչ ֆորմալ դասընթացներ, շրջայցեր տարբեր կազմակերպություններ:

Կարիերայի կենտրոնի աշխատանքների շրջանակում ինչպե՞ս է տեղի ունենում ուսանողների ներգրավումը:

-Ընդհանուր առմամբ արտաքին ներգրավման առաջին փուլը այցելություններն են տարածաշրջանի դպրոցներ՝ ապահովելու քոլեջում գործող մասնագիտության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ: Ուսանողների ներքոլեջային ներգրավումը հիմնականում տեղի է ունենում ոչ ֆորմալ դասընթացների, ընթացիկ հանդիպումների միջոցով: Կազմակերպվում են նաև հանդիպումներ՝ ներգրավելով յուրաքանչյուր մասնագիտության համապատասխան ոլորտի մասնագետներ:

Կարո՞ղ եք կիսվել նախաձեռնությունների, ծրագրերի հաջողված օրինակներով, որոնք օգնել են կազմակերպել ուսանողների արդյունավետ ներգրավումը:

-Նախ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնին՝ ամբողջական աջակցություն տրամադրելու համար: Մշտապես ստանալով մեթոդական աջակցություն, մասնակցելով վերապատրաստումներին՝ կարողանում ենք արդյունավետ կազմակերպել ուսանողների ներգրավումը:

Հաջողված ծրագիր եմ համարում նաև 2021 թ.-ին <<Միասին>> հիմնադրամի հետ համագործակցությունը: Ծրագիրը իրականացվեց մի քանի փուլով: Լավագույն ուսանողները, անցնելով պրակտիկա, ստացան վարձատրություն, իսկ ծրագրի արդյունքում ուսանողներից մեկը արժանացավ <<Լավագույն աշկերտ>> մրցանակի:

Կարիերայի խորհրդատվության ինչպիսի՞ մոտեցում եք կիրառում՝ ուղղորդելով ուսանողներին:

-Կարիերայի արդյունավետ ուղղորդումը հիմնվում է համակցված գործընթացի վրա՝ պարունակելով տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման տրամադրում: Այսպիսով, յուրաքանչյուր ուսանողի հետ կատարվում է անհատական աշխատանք՝ բացահայտելով ուսանողի նախասիրությունները և հետաքրքրությունները, ինչպես նաև՝ վերլուծելով ուժեղ, թույլ կողմերը և հնարավորությունները:

Ինչպե՞ս է Կարիերայի կենտրոնը հաստատում և պահպանում համագործակցություններ գործատուների և կազմակերպությունների հետ՝ աջակցելու աշխատանքի ընդունման և պրակտիկայի կազմակերպման հարցերում:

-Առկա են կազմակերպություններ, որոնց հետ այս պահին համագործակցում ենք, ինչպես նաև կապեր ենք ստեղծում տեղական, տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների հետ, որի արդյունքում համատեղ իրականացվում են աշխատանքներ՝ նպաստելու ուսանողի մասնագիտական ուղու զարգացմանը:

Կարո՞ղ եք մատնանշել հաջողված օրինակներ գործընկերների հետ, որոնք հնարավորություն են տվել ուսանողներին անցնել աշխատանքի՝ արդյունավետ մեկնարկելով կարիերայի ուղին:

-Հաջողված համագործակցությունները բազմաթիվ են, հաշվի առնելով տարածաշրջանի զբոսաշրջային պոտենցիալը, հաջողված փորձերից է Ծաղկաձոր քաղաքի հյուրանոցային համալիրների հետ համագործակցությունները: Ինչպես նաև և հրազդանյան, և երևանյան հաշվապահական գրասենյակներում, դեղատներում բուժ. հիմնարկներում (տարածաշրջանում և դուրս), ՏՏ կազմակերպություններում իրենց մասնագիտական ուղին հաջողությամբ կերտում են մեր շրջանավարտները:

Ինչպե՞ս եք իրազեկվում ոլորտի միտումների և աշխատաշուկայի պահանջների մասին:

-Աշխատաշուկան փոխվում է արագ. պետք է լինել ճկուն՝ արձագանքելով մարտահրավերներին: Այս տեսանկյունից համագործակցում ենք ՄՄԾ-ի հետ, որի շնորհիվ տեղեկանում ենք աշխատաշուկայի փոփոխված պահանջներին: Արդյունավետ գործիքակազմ կարելի է համարել Edu2work համակարգը, որն օգնում է կողմնորոշվել աշխատաշուկայում:

Ինչպե՞ս է Կարիերայի կենտրոնը աջակցում շրջանավարտներին՝ զարգացնելու կարիերայի ուղին:

-Կարիերայի կենտրոնի աշխատանքները օգնում են շրջանավարտներին աշխատաշուկա մուտք գործել համապատասխան հմտություններով՝ լինելով ոլորտում մրցունակ:

Որպես հաջողված դեպքեր՝ կարո՞ղ եք մատնանշել շրջանավարտների, որոնք գրանցել են հաջողություններ կարիերայի իրենց ուղում:

-Յուրաքանչյուր մասնագիտությամբ ունենք շրջանավարտների հաջողված պատմություններ: Կարևոր է շեշտել նաև այն հանգամանքը, որ մեր շրջանավարտները իրենց փորձով կիսվում են ապագա մասնագետների հետ՝ հարստացնելով նրանց մասնագիտական աշխարհայացքը: Ինչպես նաև, շրջանավրտների հաջողված պատմությունները պարբերաբար լուսաբանվում են

ԿՏՊՔ-ի սոցիալական հարթակներում և պաշտոնական կայքում: Ուրախությամբ կարող եմ նշել, որ մեր շրջանավարտները այսօր հանդիսանում են գործատուներ:

Որո՞նք են Կարիերայի կենտրոնի պլանները ապագայում:

-Երկարաժամկետ պլանները հիմվում են և տարածաշրջանում, և տարածաշրջանից դուրս նոր համագործակցությունների հաստատման, ընդլայնման վրա, որը հնարավորություն կտա բացել նոր դռներ և ուսանողների, և շրջանավարտների համար: